ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

25 դեկտեմբերի 2019 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/4
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 3-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 4-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 52 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, խորհրդականները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետի մամուլի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և վարչական շրջանների ղեկավարները:

Նիստին ներկա էին ՀՀ ԶԼՄ-ի ներկայացուցիչներ:

Նախքան օրակարգի նախագծին անդրադառնալը, Երևանի քաղաքապետը հայտարարեց, որ համաձայն Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N1-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 24.2-րդ կետի՝ Երևանի ավագանու օրակարգի նախագծի 13-րդ հարցը՝ «Երևան քաղաքի Եղիշե Թադևոսյան փողոցի h.11/1 հասցեում գտնվող գույքի վերակառուցման և հիմնանորոգման ծրագրին հավանություն տալու, գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» իրավական ակտի նախագիծը հանվում է օրակարգի նախագծից:

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյանը:

Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Մ.Մանրիկյանը առաջարկեց Երևանի ավագանու նիստի օրակարգի նախագծից հանել «Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» ավագանու իրավական ակտի նախագիծը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը հայտնեց, որ «Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» ավագանու իրավական ակտի նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Մ.Մանրիկյանի կողմից ներկայացված առաջարկը չընդունվեց:

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:
3. Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2020 թվականի ծրագրի վերաբերյալ:
4. Երևան համայնքում տեղական տուրքերի 2020 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
5. Երևան համայնքում տեղական վճարների 2020 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
6. 2020 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին:
7. 2020 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին:
8. Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին:
9. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N45-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
10. Երևանի զարգացման 2020 թվականի ծրագրի հաստատման մասին:
11. Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի մասին:
12. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:
13. Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը /հեռավորությանը/ ներկայացվող պահանջները սահմանելու մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** - Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 45 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝45, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

2. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Մելքոմ Մելքոմյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

2.Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Մելքոմ Մելքոմյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ:

1.Արսեն Կարապետյան – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2.Լևոն Զաքարյան - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3.Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Ելույթների վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 109-րդ կետը՝ արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի «Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանելու մասին» N405-Ն որոշման հավելվածում (այսուհետև՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2) շինարարական աշխատանքներն սկսելուց ոչ ավելի վաղ, քան մեկ ամիս առաջ կառուցապատվող օբյեկտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցված՝ ճարտարապետաշինարարական նախագծով նախատեսված շինարարական հրապարակի կազմակերպումը,»:

2) Հավելվածի 6-րդ կետի 4-րդ ենթակետում «աղտոտումն» բառը փոխարինել «աղտոտման» բառով:

3) Հավելվածի 7-րդ կետի 3-րդ ենթակետից հանել «եթե շինարարական հրապարակը նախատեսվում է կազմակերպել նախքան շինարարական աշխատանքներ իրականացնելն, ապա» բառերը:

4) Հավելվածի 7-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«6) եթե կառուցապատումն իրականացվում է փողոցներին հարող հողամասերում, ապա շինարարական հրապարակի կազմակերպման պահից Կառուցապատողը պետք է ապահովի հետիոտնի անվտանգ շարժման համար անհրաժեշտ ժամանակավոր հարմարություններ, այդ թվում՝ թեքահարթակներ ունեցող առանձին անցուղի և ժամանակավոր լուսավորություն, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում տեղադրի ճանապարհային երթևեկության կանոնների լրացուցիչ նշաններ՝ այն նախապես համաձայնեցնելով իրավասու մարմնի հետ,»:

5) Հավելվածի 7-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«8)Կառուցապատողը պետք է կազմակերպի շինարարական աղբի կանոնավոր տեղափոխման աշխատանքները և մինչև աղբի տեղափոխումը այն պահի Կառուցապատվող օբյեկտում, իսկ շինարարական հրապարակի առկայության դեպքում՝ դրա համար շինարարական հրապարակում նախատեսված տարածքում՝ ծածկված անթափանց թաղանթներով կամ փակ տարաների (կոնտեյներներ, պարկեր և այլն) մեջ,»:

6) Հավելվածի 7-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10-րդ ենթակետով՝

«եթե կառուցապատումն իրականացվում է փողոցներին հարող հողամասերում, ապա շինարարության թույլտվությամբ սահմանված սկզբնական, իսկ ժամկետի երկարաձգման դեպքում՝ երկարաձգված ժամկետում կառուցապատումը չավարտվելու դեպքում կառուցապատվող հողամասին հարող և շինարարական հրապարակի սահմաններում ներառված՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության մասին պայմանագիրը ենթակա է Երևանի քաղաքապետի կողմից միակողմանի վաղաժամկետ լուծման, և Կառուցապատողը պարտավոր է Երևանի քաղաքապետի պահանջով և սահմանած ողջամիտ ժամկետում իր հաշվին վերացնել հետիոտնի շարժման համար կազմակերպված ժամանակավոր հարմարությունները և վերականգնել մայթը, ընդ որում Կառուցապատողը պարտավոր է վերականգնված մայթը սահմանազատել կառուցապատվող տարածքից՝ շինարարական հրապարակի ցանկապատման համար օգտագործված շինարարական նյութերին համանման նյութերով: Երևանի քաղաքապետը մայթի վերականգնման պահանջը ներկայացնում է՝ բնականոն երթևեկության վերականգնման և տարածքի բարեկարգման անհրաժեշտությունից ելնելով, քաղաքաշինության բնագավառում շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից տրված՝ շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության եզրակացության հիման վրա, որի ստացման ծախսը ենթակա է փոխհատուցման Կառուցապատողի կողմից: Երևանի քաղաքապետի պահանջով և սահմանած ողջամիտ ժամկետում մայթը Կառուցապատողի կողմից

չվերականգնվելու դեպքում, այն ենթակա է վերականգնման և սահմանազատման Երևանի քաղաքապետի որոշմամբ՝ Կառուցապատողի հաշվին։»։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝51, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

3. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2020 թվականի ծրագրի վերաբերյալ:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Վահան Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Արմեն Գալջյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2020 թվականի ծրագրի վերաբերյալ» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ:

1.Իզաբելլա Աբգարյան – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2020 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ.

1) հողամասերն օգտագործման, այդ թվում՝ սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) տրամադրելու և օտարման հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման հողային, քաղաքացիական օրենսգրքերին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N286 որոշմանը և հողային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերին համապատասխան.

2) հողամասերի կամ դրանց առանձին հատվածների (մասերի) աճուրդով վաճառքի մեկնարկային գինը չի կարող պակաս լինել հողամասի կադաստրային արժեքից.

3) ինքնակամ կառույցների օտարման կամ օգտագործման տրամադրելու հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմանը համապատասխան.

4) քանդման ենթակա վթարային բազմաբնակարան շենքերի, բնակելի տների և հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչների բնակարանային խնդիրների լուծման նպատակով, համայնքային և (կամ) պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին կառուցված և համայնքային սեփականություն հանդիսացող բազմաբնակարան շենքերի բնակարանների հատկացման կամ այդ բնակարանների տնօրինման հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի «Երևան քաղաքի քանդման ենթակա վթարային հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչներին բնակարաններ հատկացնելու կարգը հաստատելու մասին» N172-Ն և 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին» N682 որոշումներին համապատասխան.

5) հողամասերն անհատույց օգտագործման, վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում են մինչև 99 տարի ժամկետով, բացառությամբ՝ օրենսդրությամբ

նախատեսված դեպքերի: Հողամասերի սահմանափակ օգտագործումը (սերվիտուտ) կարող է լինել ժամանակավոր՝ մինչև 99 տարի ժամկետով, կամ մշտական.

6) հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած ներդրումային ծրագրերի իրականացման համար հողամասերի ուղղակի վաճառքի դեպքում ձեռք բերողների համար կարող է սահմանվել նաև տարաժամկետ վճարման իրավունք.

7) հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրվում է հողային օրենսգրքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 50 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝49, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է

4. **ԼՍԵՑԻՆ** - Երևան համայնքում տեղական տուրքերի 2020 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետ Արմեն Հարությունյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

2.Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

3.Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետ Ա. Հարությունյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքում տեղական տուրքերի 2020 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ:

1.Թեհմինա Վարդանյան – Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

2. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սահմանել Երևան համայնքում (այսուհետ՝ Երևան) տեղական տուրքերի 2020 թվականի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 105000 /մեկ հարյուր հինգ հազար/ դրամ,

բ. սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 210000 /երկու հարյուր տասը հազար/ դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 300000 /երեք հարյուր հազար/ դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 350000 /երեք հարյուր հիսուն հազար/ դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 700000 /յոթ հարյուր հազար/ դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 21000 /քսանմեկ հազար/ դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 35000 /երեսունհինգ հազար/ դրամ.

2) Երևանի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրքը սահմանվում է 21000 /քսանմեկ հազար/ դրամ,

3) Երևանի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, տեղական տուրքը սահմանվում է 35000 /երեսունհինգ հազար/ դրամ.

4) Երևանի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար, տեղական տուրքը սահմանվում է 600000 /վեց հարյուր հազար/ դրամ.

5) Երևանի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար, տեղական տուրքը սահմանվում է 87500 /ութսունյոթ հազար հինգ հարյուր/ դրամ.

6) Երևանի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առ ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար, տեղական տուրքը սահմանվում է 50000 /հիսուն հազար/ դրամ.

7) Երևանի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար ըստ գոտիավորման տեղական տուրքը սահմանվում է համաձայն **N1 հավելվածի**.

8) Երևանի վարչական տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար ըստ գոտիավորման տեղական տուրքը սահմանվում է համաձայն **N 2 հավելվածի**.

9) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին Երևանի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար տեղական տուրքը սահմանվում է 500 /հինգ հարյուր/ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

10) Երևանի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 120000 /մեկ հարյուր քսան հազար/ դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 1400000 /մեկ միլիոն չորս հարյուր հազար/ դրամ,

դ. խաղատների համար՝ 3000000 /երեք միլիոն/ դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ 450000 /չորս հարյուր հիսուն հազար/ դրամ.

11) Երևանի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ գոտիավորման, սահմանվում է համաձայն **N 3 հավելվածի**.

12) Երևանի վարչական տարածքում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը՝ յուրաքանչյուր տնային կենդանի պահելու համար, սահմանվում է 5000 /հինգ հազար/ դրամ.

13) Երևանի ավագանու սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը, ըստ գոտիավորման, սահմանվում է՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝

- Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքում՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ,
- Նոր Նորք վարչական շրջանի տարածքում՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ (Մյասնիկյան պող.՝ 3500 /երեք հազար հինգ հարյուր) դրամ,
- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում՝ 3000 /երեք հազար/ դրամ (Իսակովի պող., Էջմիածնի խճ., Զվարթնոց օդանավակայան՝ 3500 /երեք հազար հինգ հարյուր/ դրամ),
- Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների տարածքում՝ 3500 /երեք հազար հինգ հարյուր/ դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝

- Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքում՝ 4000 /չորս հազար/ դրամ.
- Նոր-Նորք վարչական շրջանի տարածքում՝ 4000 /չորս հազար/ դրամ (Մյասնիկյան պող.՝ 7000 /յոթ հազար/ դրամ),
- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում՝4000 /չորս հազար/ դրամ (Իսակովի պող., Էջմիածնի խճ., Զվարթնոց օդանավակայան՝ 7000 /յոթ հազար/ դրամ),
- Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների տարածքում՝ 7000 /յոթ հազար/ դրամ.

գ. այլ արտաքին գովազդի համար՝

- Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքում՝ 2000 /երկու հազար/ դրամ,
- Նոր-Նորք վարչական շրջանի տարածքում՝ 2000 /երկու հազար/ դրամ (Մյասնիկյան պող.՝ 2625 /երկու հազար վեց հարյուր քսանհինգ/ դրամ),
- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում՝ 2200 /երկու հազար երկու հարյուր/ դրամ (Իսակովի պող., Էջմիածնի խճ., Զվարթնոց օդանավակայան՝ 2625 /երկու հազար վեց հարյուր քսանհինգ/ դրամ),
- Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների տարածքում՝ 2625 /երկու հազար վեց հարյուր քսանհինգ/ դրամ.

դ. սոցիալական գովազդի համար՝ 0 /զրո/ դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ Երևանի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ յուրաքանչյուր ամիս սահմանված տուրքի 25 %-ի չափով.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ Երևանի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ յուրաքանչյուր ամիս սահմանված տուրքի 10 %-ի չափով.

14) Երևանի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է 300000 /երեք հարյուր հազար/ դրամ.

15) Երևանի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար տեղական տուրքը սահմանվում է 10000 /տասը հազար/ դրամ.

16) Երևանի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար, տեղական տուրքը սահմանվում է 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ.

17) Երևանի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար, տեղական տուրքը սահմանվում է՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 /հինգ միլիոն/ դրամ.

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 /տասը միլիոն/ դրամ.

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 14000000 /տասնչորս միլիոն/ դրամ.

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 20000000 /քսան միլիոն/ դրամ.

18) Երևանի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է 300000 /երեք հարյուր հազար/ դրամ.

19) Երևանի վարչական տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

ա) կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ,

բ) հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ.

2. Սահմանել, որ.

1) տեղական տուրք վճարողների գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային ձևով (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով).

2) Երևանի կողմից մատուցվող ծառայությունների (թույլտվությունների տրամադրման) համար տեղական տուրքը գանձվում է նախքան սույն որոշմամբ սահմանված գործողությունների կատարումը (վավերացումը) և (կամ) թույլտվությունների տրամադրումը կամ համայնքային ծառայությունների մատուցումը.

3) սույն որոշմամբ սահմանված թույլտվությունների տրամադրումը կամ գործողությունների կատարումը կարող է մերժվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դրանց տրամադրման համար նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու և (կամ) տեղական տուրքի գումարը չվճարելու դեպքում.

3. Երևանի քաղաքապետին՝ ապահովել տեղական տուրքերի դրույքաչափերի, վճարման կարգի և ժամկետների, ամսվա ընթացքում տեղական տուրքերի յուրաքանչյուր տեսակի մասով փաստացի ստացված եկամուտների, ինչպես նաև Երևանի ավագանու սահմանած արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ իրազեկումն Երևանի պաշտոնական համացանցային www.yerevan.am կայքում:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 52 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝42, դեմ՝4, ձեռնպահ՝6

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

5. **ԼՍԵՑԻՆ** - Երևան համայնքում տեղական վճարների 2020 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետ Արմեն Հարությունյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետ Ա. Հարությունյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքում տեղական վճարների 2020 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ:

1.Արմեն Ներսիսյան – Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

Ելույթի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

ՈՐՈՇՎԵՑ – Սահմանել Երևան համայնքում (այսուհետ՝ Երևան) տեղական վճարների 2020 թվականի հետևյալ դրույքաչափերը՝

1) Երևանի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝

ա. մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 /հիսուն հազար/ դրամ.

բ. 100-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ.

գ. 500-ից մինչև 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 200000 /երկու հարյուր հազար/ դրամ.

դ. 1500 -ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 300000 /երեք հարյուր հազար/ դրամ:

2)ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝

ա. մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 /հիսուն հազար/ դրամ.

բ. 100-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ.

գ. 500-ից մինչև 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 200000 /երկու հարյուր հազար/ դրամ.

դ. 1500 -ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 300000 /երեք հարյուր հազար/ դրամ:

3) սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝

ա. մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

բ. 100-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 /հիսուն հազար/ դրամ.

գ. 500-ից մինչև 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ.

դ. 1500-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

4) Երևանի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝

ա. մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար՝ յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 /հիսուն/ դրամ.

բ. 500-ից մինչև 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հողամասի համար 25000 /քսանհինգ հազար/ դրամ, գումարած 500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 10 /տասը/ դրամ:

գ. 1500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար 35000 /երեսունհինգ հազար/ դրամ գումարած 1500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 10 /տասը/ դրամ:

5) Երևանի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ յուրաքանչյուր մասնակցի համար՝ 10000 /տասը հազար/ դրամ.

6) Երևանի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ յուրաքանչյուր մասնակցի համար՝ օրական 200 /երկու հարյուր/ դրամ.

7) Երևանի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝

ա. բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար՝ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ 200 /երկու հարյուր/ դրամ.

բ. ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

- առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 70 /յոթանասուն/ դրամ.
- հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 30 /երեսուն/ դրամ.
- վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 18 /տասնութ/ դրամ.
- գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 4 /չորս/ դրամ,
- զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 8 /ութ/ դրամ.
- արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 8 /ութ/ դրամ.

գ. շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 70 /յոթանասուն/ դրամ.

դ. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն որոշման 1-րդ մասի 7-րդ կետի բ ենթակետով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

- ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 /երեք հազար/ դրամ.
- ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10000 /տասը հազար/ դրամ.

8) Երևանի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը սահմանվում է՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 500 /հինգ հարյուր/ դրամ, մեկ տոննա աղբի համար՝ 1800 /մեկ հազար ութ հարյուր/ դրամ.

9) Երևանի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝

ա. ամսական 25 /քսանհինգ/ դրամ՝ յուրաքանչյուր 1 քառակուսի մետր սեփականության իրավունքով պատկանող բնակելի տարածքի մակերեսի համար.

բ. ամսական 50 /հիսուն/ դրամ՝ յուրաքանչյուր 1 քառակուսի մետր սեփականության իրավունքով պատկանող ոչ բնակելի տարածքի մակերեսի համար.

10) Երևանի ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ մեկ երեխայի հաշվարկով ամսական 25700 /քսանհինգ հազար յոթ հարյուր/ դրամ.

11) Երևանի ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ուսումնական պլանով նախատեսված ծառայությունից օգտվողների համար՝ մեկ երեխայի հաշվարկով.

ա. խորացված մասնագիտական երգեցողության ուսուցում՝ ամսական 24500 /քսանչորս հազար հինգ հարյուր/ դրամ.

բ. գործիքային (դաշնամուր, լարային նվագարաններ, փողային և ազգային նվագարաններ, հարվածային գործիքներ, ակորդեոն, տավիղ, կիթառ) բաժիններում ուսուցում՝ ամսական 20300 /քսան հազար երեք հարյուր/ դրամ.

գ. երգեցողության ուսուցում՝ 19300 /տասնինը հազար երեք հարյուր/ դրամ.

դ. պարարվեստի ուսուցում՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

ե. կերպարվեստի ուսուցում՝ 9300 /ինը հազար երեք հարյուր/ դրամ.

զ. թատերարվեստի ուսուցում՝ 8700 /ութ հազար յոթ հարյուր/ դրամ.

է. սույն ենթակետի «բ» և «գ» պարբերություններում նշված ծառայություններից որևէ մեկով օգտվողների կողմից նույն «բ» և «գ» պարբերություններում նշված մեկ այլ ծառայությունից օգտվելու համար տեղական վճարը սահմանվում է տվյալ ուսուցման համար սահմանված տեղական վճարի 50 %-ի չափով:

12) Երևանի ենթակայության թանգարանների մուտքի համար՝ 1 անձի համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ.

13) Երևանի Ազատության հրապարակում գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղիում ավտոտրանսպորտային միջոցն կայանելու համար՝

ա. մինչև մեկ ժամ, ինչպես նաև մեկ ժամից ավելի կայանելու յուրաքանչյուր ժամի համար՝ 200 /երկու հարյուր/ դրամ.

բ. ժամը 24:00-ից մինչև 09:00-ն կայանելու համար՝ 500 /հինգ հարյուր/ դրամ՝ միանվագ վճարելու դեպքում.

գ. 30-օրյա ժամանակահատվածում՝ ժամը 08:00-ից մինչև 20:00-ն կայանելու համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ (աբոնեմենտ).

դ. 30-օրյա ժամանակահատվածում՝ ժամը 19:00-ից մինչև 09:00-ն կայանելու համար՝ 10000 /տասը հազար/ դրամ (աբոնեմենտ).

ե. 30-օրյա ժամանակահատվածում՝ շուրջօրյա կայանելու համար՝ 20000 /քսան հազար/ դրամ (աբոնեմենտ).

14) Երևանի սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար՝

ա. ծառայողական ավտոկայանատեղերում, ըստ յուրաքանչյուր կայանման տեղի՝

- մեկ ամսվա համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

- մեկ տարվա համար (մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ)՝ 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ.

բ. այլ վճարովի ավտոկայանատեղում մեկ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը ավտոկայանատեղում ժամը 09:00-ից մինչև 24:00-ն կայանելու համար՝

- յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ 100 /մեկ հարյուր/ դրամ, որի դեպքում փաստացի կայանման ժամանակի րոպեներով հաշվարկն իրականացվում է հետևյալ կերպ՝ ավտոկայանատեղում կայանելու պահից մինչև 15 րոպե վճար կարող է չվճարվել, իսկ 15 րոպեից ավելի կայանելու համար մեկ ժամվա համար սահմանված վճարի դրույքաչափը պետք է վճարվի նախապես՝ կայանելու պահից 15 րոպեի ընթացքում, ընդ որում՝ կայանումը 1 ժամից ավելի տևելու դեպքում յուրաքանչյուր հաջորդ մեկ ժամի համար վճարումը պետք է կատարվի մինչև նախորդ ժամի համար կատարված վճարման ժամանակահատվածի լրանալը.
- յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ 500 /հինգ հարյուր/ դրամ.
- մեկ շաբաթվա համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ.
- մեկ ամսվա համար՝ 2000 /երկու հազար/ դրամ.
- մեկ տարվա համար (մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ)՝ 12000 /տասներկու հազար/ դրամ.

15) հատուկ տարածքում մեկ ավտոտրանսպորտային միջոցի կամ դրա կցորդի պահպանման համար տեղական վճարը գանձվում է.

ա. յուրաքանչյուր մեկ ժամվա և մեկ օրվա համար՝ սույն որոշման 1-ին մասի 14-րդ կետի «բ» ենթակետի մեկ ժամվա և մեկ օրվա համար սահմանված դրույքաչափերի եռապատիկը:

16) Երևանի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար տեղական վճարը մեկ փաստաթղթի համար սահմանվում է՝ 1000 /մեկ հազար/ դրամ:

17) Երևանի կողմից անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝

ա. 4-ից 6 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու դեպքում՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

բ. 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ:

18) Երևանի ենթակայության քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատավայրից դուրս քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ կատարելու համար տեղական վճարը սահմանվում է 50000 /հիսուն հազար/ դրամ.

19) Երևանը սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափը սահմանվում է 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ.

20) Երևան քաղաքում քաղաքաշինական գործունեության և բարեկարգման նպատակով հատկացման /գլխավոր հատակագիծ/ մեկ հայտի տեղական վճարի դրույքաչափը սահմանվում է 49300 /քառասունինը հազար երեք հարյուր/ դրամ:

2. Սահմանել, որ.

1) սույն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի նկատմամբ ենթակա է կիրառման Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որոշմամբ Երևանի համար սահմանված 1-ից մինչև 9-ը տարածահաշվարկային գոտիավորումը, կիրառելով 1.9 բազային (առավելագույն) գործակիցը, ընդ որում՝ տարածահաշվարկային 2-րդ գոտուց սկսած՝ յուրաքանչյուր հաջորդ գոտու նկատմամբ կիրառվում է լրացուցիչ նվազեցնող՝ 0.2 գործակից.

2) տեղական վճար վճարողների գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային ձևով (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով).

3) Երևանի կողմից մատուցվող ծառայությունների համար տեղական վճարը գանձվում է ծառայության մատուցումից առաջ, ընդ որում՝ սույն որոշման 1-ին կետի 10-րդ և 11-րդ ենթակետերում նշված ծառայությունների մատուցման դիմաց տեղական վճարը գանձվում է մինչև յուրաքանչյուր ամսվա 6-ը, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 7-րդ, 9-րդ և 15-րդ ենթակետերում նշվածների, որոնց դեպքում տեղական վճարը գանձվում է ծառայությունը մատուցելուց հետո.

4) սույն որոշման 1-ին կետի 11-րդ ենթակետում նշված ծառայությունների դիմաց վճարման ենթակա տեղական վճարի ամսական դրույքաչափը վճարվում է 2020 թվականի 10 ամսվա

ընթացքում մատուցած ծառայությունների դիմաց (2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի հուլիսի 1-ը և 2020 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ուսուցման համար).

5) սույն որոշմամբ սահմանված ծառայությունների մատուցումը կարող է մերժվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դրանց տրամադրման համար նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու և (կամ) տեղական վճարի գումարը չվճարելու դեպքում:

3. Երևանի քաղաքապետին՝ ապահովել տեղական վճարների դրույքաչափերի, վճարման կարգի և ժամկետների, ամսվա ընթացքում տեղական վճարների յուրաքանչյուր տեսակի մասով փաստացի ստացված եկամուտների, ինչպես նաև Երևանի ավագանու սահմանած արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ իրազեկումն Երևանի պաշտոնական համացանցային www.yerevan.am կայքում:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝47, դեմ՝1, ձեռնպահ՝3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

6. **ԼՍԵՑԻՆ** - 2020 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետ Արմեն Հարությունյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Գայանե Մելքոմ Մելքոմյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետ Ա. Հարությունյանը:

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 109-րդ կետը՝ արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «2020 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1.Լևոն Հովհաննիսյան – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սահմանել, որ Երևանի վարչական տարածքում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների համար, որոնց 2019 թվականի հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 115 միլիոն դրամը, 2020 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափերի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, դրանք սահմանելով.

1) Երևանի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար 2020 թվականի տեղական տուրքի դրույքաչափի 58.34 տոկոսի չափով.

2) Երևանի վարչական տարածքում առևտրի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար 2020 թվականի տեղական տուրքի դրույքաչափի 72.92 տոկոսի չափով.

3) Երևանի վարչական տարածքում հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար 2020 թվականի տեղական տուրքի դրույքաչափի 70 տոկոսի չափով:

2. Սույն որոշմամբ նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք է հանդիսանում Երևանի քաղաքապետին ուղղված անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի դիմումը՝ տեղական տուրքի արտոնություն ստանալու մասին, որին կցվում են. անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական ռեգիստրի վկայականների պատճենները, շենքի կամ շինության սեփականության կամ

օգտագործման վկայականի պատճենը և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված իրացման շրջանառության վերաբերյալ տեղեկանքը:

3. Սույն որոշման 1-ին կետում նախատեսված արտոնությունները կիրառվում են նաև այն տնտեսվարողների համար, ովքեր ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում հաշվառվել կամ գրանցվել են 2020 թվականի հունվարի 1-ից:

Սույն կետով նախատեսված արտոնությունների կիրառման համար տնտեսավարող սուբյեկտները ներկայացնում են սույն որոշման 2-րդ կետում նշված փաստաթղթերը, բացառությամբ՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված իրացման շրջանառության վերաբերյալ տեղեկանքի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 50 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝48, դեմ՝0, ձեռնպահ՝2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

7. **ԼՍԵՑԻՆ** - 2020 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետ Արմեն Հարությունյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Գրիգորի Երիցյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետ Ա. Հարությունյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «2020 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ:

1.Իզաբելլա Աբգարյան – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սահմանել, որ.

1) Երևանի ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար 2020 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե՝

ա. երեխայի ծնողները, կամ ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը մշտապես կամ փաստացի հաշվառված են Երևան քաղաքում,

բ. երեխայի ծնողը ազատամարտիկ է և (կամ) զոհված ազատամարտիկի ընտանիքի անդամ է,

գ. երեխայի ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր ժամկետային, պայմանագրային և այլ զորքերում պայմանագրային զինծառայող է,

դ. զոհված զինծառայողի երեխա է,

ե. երկկողմանի ծնողազուրկ երեխա է,

զ. սիրիահայի երեխա է,

է. 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող ծնողի երեխա է,

ը. հաշմանդամ երեխա է.

2) սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում չներառված Երևանի ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար 2020 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, այն սահմանելով՝ 8000 (ութ հազար) դրամ.

3) եթե Երևանի ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ուսումնական

պլանով նախատեսված ծառայություններից օգտվողներն են սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի պարբերություններում նշված անձինք, ապա ծառայություններից օգտվողների համար 2020 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, դրանք սահմանելով.

ա. խորացված մասնագիտական երգեցողության ուսուցման համար՝ ամսական 8000 (ութ հազար) դրամ.

բ. գործիքային (դաշնամուր, լարային նվագարաններ, փողային և ազգային նվագարաններ, հարվածային գործիքներ, ակորդեոն, տավիղ, կիթառ) բաժիններում ուսուցման համար՝ ամսական 8000 (ութ հազար) դրամ.

գ. երգեցողության ուսուցման համար՝ ամսական 8000 (ութ հազար) դրամ.

դ. պարարվեստի ուսուցման համար՝ ամսական 8000 (ութ հազար) դրամ.

ե. կերպարվեստի ուսուցման համար՝ ամսական 8000 (ութ հազար) դրամ.

զ. թատերարվեստի ուսուցում՝ ամսական 8000/ութ հազար/ դրամ.

է. սույն ենթակետի «բ» և «գ» պարբերություններում նշված ծառայություններից որևէ մեկով օգտվողները նույն «բ» և «գ» պարբերություններում նշված մեկ այլ ծառայությունից օգտվելու համար ամսական վճարում են 4000 (չորս հազար) դրամ.

4) Երևանի ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ուսումնական պլանով նախատեսված ծառայություններից օգտվողների կողմից մինչև 2018 թվականի հունվարի 1-ը դպրոցներին վճարվող գումարների և 2020 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի տարբերությունների արդյունքում վճարման խնդիրներ ունեցող մինչև 300 երեխայի հաշվարկով 2020թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի նկատմամբ կիրառվում է զրոյական դրույքաչափ՝ ծառայություններից օգտվողների օրինական ներկայացուցիչների դիմումի հիման վրա Երևանի քաղաքապետի որոշմամբ սահմանված կարգով.

5) Երևանի ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ուսումնական պլանով նախատեսված ծառայություններից օգտվողների կողմից մինչև 2018 թվականի հունվարի 1-ը դպրոցներին վճարվող գումարների և 2020 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի տարբերությունների արդյունքում վճարման խնդիրներ և/կամ բարձր առաջադիմություն ունեցող մինչև 800 երեխայի հաշվարկով 2020 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի նկատմամբ կիրառվում են նվազեցման արտոնություններ՝ դրանք սահմանելով 4000 (չորս հազար) դրամ, ծառայություններից օգտվողների օրինական ներկայացուցիչների դիմումի հիման վրա, Երևանի քաղաքապետի որոշմամբ սահմանված կարգով.

6) Երևանի ենթակայության թանգարանների մուտքի համար 2020 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման կամ զրոյական դրույքաչափի արտոնություններ, դրանք սահմանելով.

Հ/Հ	Երևանի ենթակայության ՀՈԱԿ-ներ	Մուտքի տոմսի արժեքի տեղական տուրքի չափը		
		դպրոցական	ուսանող	մեծահասակ
1.	Երևան քաղաքի պատմության թանգարան	250 (երկու հարյուր հիսուն) դրամ	250 (երկու հարյուր հիսուն)դրամ	500 (հինգ հարյուր) դրամ
2.	«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան	300 (երեք հարյուր) դրամ	300 (երեք հարյուր) դրամ	1000 (մեկ հազար) դրամ
3.	Ժամանակակից արվեստի թանգարան	500 (հինգ հարյուր) դրամ	500 (հինգ հարյուր) դրամ	500 (հինգ հարյուր) դրամ
4.	Կարեն Դեմիրճյանի թանգարան	0 (զրո) դրամ	0 (զրո)դրամ	0 (զրո) դրամ
5.	Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան	0 (զրո)դրամ	0 (զրո) դրամ	0 (զրո) դրամ

7) ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող հանդիսացող և այն ղեկավարող տեղաշարժվելու դժվարություն ունեցող հաշմանդամություն ունեցող անձի կամ այդպիսի հաշմանդամություն ունեցող անձին կամ հաշմանդամություն ունեցող երեխա (այսուհետ՝ հաշմանդամություն ունեցող անձ) փոխադրող տրանսպորտային միջոց

ղեկավարող անձանց համար 2020 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ ազատելով հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից.

8) որպես վառելիք բացառապես էլեկտրաէներգիա օգտագործող և բացառապես էլեկտրական շարժիչով աշխատող ավտոտրանսպորտային միջոցի (էլեկտրամոբիլ) սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող հանդիսացող և այն ղեկավարող անձանց համար 2020 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ ազատելով հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից:

2. Սույն որոշմամբ նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք են հանդիսանում հետևյալ փաստաթղթերը.

1) Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված դեպքերում՝ Երևանի քաղաքապետին ուղղված ծառայությունից օգտվողի օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, ծառայությունից օգտվողի ծննդյան կամ անձնագրի պատճենը և (կամ) պաշտպանության ոլորտի իրավասու պետական կամ այլ մարմնի կողմից տրամադրված տեղեկանքի և (կամ) վկայականի և (կամ) տվյալ փաստը հավաստող այլ փաստաթղթերի պատճենները.

2) Սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված դեպքերում՝ Երևանի քաղաքապետին ուղղված ծառայությունից օգտվողի օրինական ներկայացուցչի դիմումը, ծառայությունից օգտվողի անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճենը, Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցների (արտադպրոցական դաստիարակության հաստատությունների) տնօրենների կողմից տրված տեղեկանքը՝ արտադպրոցական դաստիարակության հաստատությունում տվյալ երեխայի ուսուցանելու մասին.

3) Սույն որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետում նշված դեպքում՝ սույն որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետում նշված անձանց կողմից Երևանի քաղաքապետին ուղղված դիմումը, որին կցվում են հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակը հավաստող, այդ թվում՝ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի որոշման, ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագրի, վարորդական իրավունքի և օրենքով նախատեսված այլ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

4) Սույն որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետում նշված դեպքում՝ սույն որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետում նշված անձանց կողմից Երևանի քաղաքապետին ուղղված դիմումը, որին կցվում են ավտոտրանսպորտային միջոցի սեփականության վկայականի կամ ավտոտրանսպորտային միջոցն օրինական այլ հիմքով տիրապետելու հանգամանքը հաստատող փաստաթղթերի, տեխնիկական անձնագրի պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 50 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝50, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

8. **ԼՍԵՑԻՆ** - Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետ Արմեն Հարությունյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Մարկոս Հարությունյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

2. Լուսինե Գևորգյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետ Ա. Հարությունյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սույն որոշման 2-րդ կետում նշված անձանց Երևան քաղաքում սեփականության իրավունքով պատկանող և գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունների մասով, իսկ դրանց բացակայության դեպքում Երևան քաղաքում գտնվող և գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող այն բնակելի նշանակության շինությունների մասով, որտեղ հաշվառված են (այդ թվում՝ փաստացի) սույն որոշման 2-րդ կետում նշված անձինք, սահմանել գույքահարկի գծով արտոնություն՝ ազատելով մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ գույքահարկի գծով առկա հարկային պարտավորությունների և հաշվարկված տույժի վճարումից:

2. Սույն որոշմամբ սահմանված գույքահարկի գծով արտոնությունները կիրառվում են հետևյալ քաղաքացիների խմբերի նկատմամբ.

1) Հայրենական մեծ պատերազմի վետերաններ,

2) Արցախյան և Աֆղանստանի պատերազմներում զոհվածների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում վիրավորված և ստացած վնասվածքներից հաջորդող տարիների ընթացքում մահացածների ընտանիքների անդամներ,

3) Արցախյան և Աֆղանստանի պատերազմների 1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամներ, որոնք գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունները ձեռք են բերել կամ դրանցում հաշվառվել են մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը:

3. Գույքահարկով հարկվող բնակելի նշանակության մեկից ավելի շինությունների առկայության դեպքում, սույն որոշումը տարածվում է այդ շինություններից մեկի նկատմամբ՝ ըստ գույքահարկի արտոնություն ստացած անձի ցանկության:

4. Այն անձինք, ովքեր կհրաժարվեն սույն որոշմամբ սահմանված գույքահարկի գծով արտոնություններից, այդ մասին Երևանի քաղաքապետին գրավոր հայտնելու դեպքում արտոնությունները ճանաչվում է չսահմանված:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝51, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

9. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N45-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

2. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

3. Հռիփսիմե Առաքելյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

4. Գրիգորի Երիցյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյան և քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 14.00-ին:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N45-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 6 անդամ.

1. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար
2. Արման Անտոնյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Թեհմինա Վարդանյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ
4. Լիլիթ Կիրակոսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
5. Գայանե Մելքոմ Մելքոմյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
6. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրի հաստատման մասին» N45-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշմամբ հաստատված Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագիրը ենթակա է հրապարակման Երևանի պաշտոնական համացանցային կայքում:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 49 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝41, դեմ՝8, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

10. **ԼՍԵՑԻՆ** - Երևանի զարգացման 2020 թվականի ծրագրի հաստատման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 7 անդամ.

1. Մարկոս Հարությունյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ
2. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար
4. Հռիփսիմե Առաքելյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար
5. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
6. Էդուարդ Ավետիսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
7. Միքայել Մանրիկյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը և քաղաքապետի տեղակալ Հ. Սարգսյանը:

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 109-րդ կետը՝ արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևանի զարգացման 2020 թվականի ծրագրի հաստատման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 7 անդամ.

1. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար
2. Հասմիկ Խաչունց- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար
3. Սերգեյ Սարգսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Կարինե Բաղդասարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
5. Աննա Ջավախյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
6. Սիփան Ասատրյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
7. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևանի զարգացման 2020 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշմամբ հաստատված Երևանի զարգացման 2020 թվականի ծրագիրն ենթակա է հրապարակման Երևանի պաշտոնական համացանցային կայքում:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 47 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝40, դեմ՝7, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

11. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի մասին:

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 14 անդամ.

1. Լյուդմիլա Սարգսյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ
2. Լևոն Հովհաննիսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Կարինե Բաղդասարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
5. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար
6. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար
7. Թեհմինա Վարդանյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ
8. Մարկոս Հարությունյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ
9. Իզաբելլա Աբգարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
10. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 105-րդ կետը՝ նիստի ժամանակը սպառվելու պատճառով, հնարավոր չի եղել քննարկել օրակարգում ընդգրկված բոլոր հարցերը, Երևանի ավագանին որոշեց երկարաձգել նիստի տևողությունը.

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 40 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝35, դեմ՝4, ձեռնպահ՝1

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 17.45-ին:

11. Լիլիթ Կիրակոսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
12. Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար
13. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
14. Արթուր Իսպիրյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը, քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը, քաղաքապետի տեղակալներ՝ Հ. Սարգսյանը, Ս. Հարությունյանը, Տ. Վիրաբյանը:

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 111-րդ կետը՝ բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի խորհրդական Արթուր Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

«Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 141-րդ կետը՝ «Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի մասին»

ավագանու որոշման նախագծի վերաբերյալ հարակից զեկույցով հանդես եկավ Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյանը:

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 109-րդ կետը՝ արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 8 անդամ.

1. Հռիփսիմե Առաքելյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար
2. Լևոն Հովհաննիսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Էռնեստ Ավանեսով- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Միքայել Մանրիկյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար
5. Լյուդմիլա Սարգսյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ
6. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
7. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
8. Արսեն Կարապետյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ –1. Հաստատել՝

1) Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեն՝

ա) եկամուտների գծով՝ 107,146,776.0 հազ. դրամ,

բ) ծախսերի գծով՝ 116,259,587.5 հազ. դրամ,

գ) դեֆիցիտը (պակասուրդը) 9,112,811.5 հազ. դրամ:

2) Երևանի 2020 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերի եկամուտներն՝ ըստ ձևավորման աղբյուրների՝ համաձայն N 1 հավելվածի.

3) Երևանի 2020 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումներն՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ համաձայն N 2 հավելվածի.

4) Երևանի 2020 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N 3 հավելվածի.

5) Երևանի 2020 թվականի բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն N 4 հավելվածի.

6) Երևանի 2020 թվականի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն N 5 հավելվածի.

7) Երևանի 2020 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N6 հավելվածի.

8) Սույն որոշման N6 հավելվածով հաստատված հատկացումների վերծանումը՝ ըստ Երևանի վարչական շրջանների և Երևանի քաղաքապետարանի (առանց Երևանի վարչական շրջանների)՝ համաձայն N7 հավելվածի:

2. Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից «Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրի համակարգում և կառավարում (պատվիրակված լիազորություններ)» ծրագրի իրականացման համար հատկացնել 9,228,174.6 հազար դրամ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ծախսեր» հոդվածով:

3. Թույլատրել Երևանի քաղաքապետին սահմանել սույն որոշմամբ հաստատված.

1) առողջության ապահովագրության ծրագրով նախատեսված ծառայությունների ցանկը, շահառուների որոշման չափորոշիչները և իրականացման կարգը,

2) բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման դրամաշնորհների և սուբսիդիաների համար նախատեսված հոդվածներով հատկացումների վերծանումը՝ ըստ ստացող կազմակերպությունների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 45 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝38, դեմ՝7, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

12. **ԼՍԵՑԻՆ** - Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Էդգար Գալստյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

2. Հռիփսիմե Առաքելյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Էդգար Գալստյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Հռիփսիմե Առաքելյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

2. Արման Անտոնյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Կարինե Բաղդասարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

«Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» ավագանու որոշման նախագծի և ելույթների վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված անձանց՝ 2020 թվականի ընթացքում շարունակելու հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի տեղական վճարների դրույքաչափերը հաստատելու մասին Երևան քաղաքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 44 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝29, դեմ՝8, ձեռնպահ՝7

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

13. **ԼՍԵՑԻՆ** - Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը /հեռավորությանը/ ներկայացվող պահանջները սահմանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության պետ Հովիկ Սաֆարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3.Արման Անտոնյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության պետ Հովիկ Սաֆարյանը:

Արտահերթ ելույթներով հանդես եկան Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Մ. Մանրիկյանը և ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դ. Խաժակյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը /հեռավորությանը/ ներկայացվող պահանջները սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն։

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սաթենիկ Մկրտչյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը:

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 109-րդ կետը՝ արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

«Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը /հեռավորությանը/ ներկայացվող պահանջները սահմանելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Արսեն Կարապետյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Սերգեյ Ապրեսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները Երևան համայնքի վարչական տարածքում կարող են գտնվել ուսումնական, կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից, հաստատություններից, բազմաբնակարան շենքերից, անհատական բնակելի տներից, հանրային սննդի օբյեկտներից, հյուրանոցներից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների վարչական շենքերից, զբոսայգիներից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից նվազագույնը 100 մետր հեռավորության վրա:

2. Անհատական բնակելի տների և (կամ) հանրային սննդի օբյեկտների և (կամ) հյուրանոցների և Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների միջև սույն որոշման 1-ին կետով սահմանված հեռավորությունը կարող է չպահպանվել անհատական բնակելի տան, հանրային սննդի օբյեկտի, հյուրանոցի սեփականատերերի գրավոր համաձայնության առկայության դեպքում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հոկտեմբերի 1-ից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 42 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝32, դեմ՝2, ձեռնպահ՝8

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի՝ որոշվեց Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 1-ին նիստը գումարել 2020 թվականի փետրվարի 11-ին, ժամը 11.00-ին։

Երևանի ավագանու անդամների բանավոր հարցերին տրվեցին պատասխաններ (աղագրությունը կցվում է)։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Կազմեց՝
Ն. Ղուկասյան